«ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

ՓԱՍՏԱԹԵՐԹ

Սույն փաստաթերթը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմի կողմից: Այն նախատեսված է պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, որոնք իրականացնում են այս ոլորտում շահապաշտպան գործունեություն, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնություններ: Փաստաթերթի հիմքում դրված է իրավունքահեն և փաստերի վրա հիմնված մոտեցումը:

Իրավիճակի նկարագրություն

«Կանայք, խաղաղություն և անվտանգությունը» (այսուհետ՝ ԿԽԱ) քաղաքականության օրակարգ է, որը հաստատում է, որ կանայք պետք է լինեն կարևոր դերակատարներ խաղաղության և անվտանգության հասնելու գործընթացներում: Այն նպաստում է պատերազմների ժամանակ գենդերային հիմնախնդիրների բարձրաձայնմանը և կանանց հավասար ու բովանդակալից մասնակցությանը խաղաղ գործընթացներին, խաղաղության կառուցմանը և անվտանգությանը: «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը սկիզբ է առել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N1325 բանաձևից, որն ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 31-ին:

Կանանց տարբեր խմբերը և պատերազմները

2020թ. Ադրբեջանի կողմից հրահրված Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) պատերազմը, 2022թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից ՀՀ տարածքում իրականացված ռազմական գործողություններն անվտանգային նոր ռիսկեր և մարտահրավերներ ստեղծեցին Հայաստանի և ավելի լայն՝ տարածաշրջանի համար:

ԼՂ-ից տեղահանված, Ադրբեջանի հետ սահմանամերձ համայնքներում բնակվող կանայք 2020թ.-ի 44-օրյա պատերազմից հետո առերեսվեցին մի նոր իրականության հետ, որն անդրադարձավ անվտանգային, ինչպես նաև ընտանեկան դերերի, եկամուտների տնօրինման փոփոխությունների, առողջապահական նոր կարիքների, բռնության աճի և այլ խնդիրների վրա: Կանանց տարբեր խմբերն, այդ թվում՝ այրի, բռնի տեղահանված, զավակին/ներին կորցրած, ՄԻԱՎ-ով ապրող, հաշմանդամություն ունեցող, լեսբի, բիսեքսուալ և տրանս, սահմանամերձ բնակավայրերում ապրող, կանայք բախվեցին համալիր սոցիալական խնդիրների: Դրանք ներառում էին կերակրողին կորցնելու, բնակավայրի կորստի, աղքատության, ապագայի անորոշության, սեռական և վերարտադրողական ու հոգեկան առողջական խնդիրների սրացման, որոնք պետք է հասցեագրվեն պետական քաղաքականության կողմից:

Առանց ԼՂ վերջնական կարգավիճակի սահմանման, տեղի բնակչությունն անվտանգ պայմաններում չի ապրում և նրանց կյանքը կարող է վտանգվել զինված բախումների արդյունքում: 2022թ. դեկտեմբերից Լաչինի միջանցքի ճանապարհի փակումը ադրբեջանցիների կողմից ևս մեկ անգամ մատնանշում է այս իրողությունը: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը և նրա գործակալությունները, չեն աշխատում ԼՂ-ում, ինչն ավելի է խորացնում կանանց կարիքների անտեսումը և թույլ չի տալիս տեղում արձագանքել այդ կարիքներին:

ԿԽԱ օրակարգը և ռազմականացումը

Հաջորդ խնդիրը, վերաբերում է ԿԽԱ օրակարգի ներքո պետության ռազմականացման/միլիտարիստական օրակարգերն առաջ տանելուն: ԿԽԱ օրակարգը միտված է կանխարգելելու պատերազմները, այլ ոչ թե դրանք կանանց համար ավելի ապահով դարձնելուն: Անվտանգային հարցերի մեկնաբանությունը ԿԽԱ օրակարգի շրջանակներում չպետք է դիտվի ռազմական անվտանգության շրջանակներում, այլ պետք է ներառի նաև սոցիալական, առողջապահական, կրթական, բնակարանային անվտանգության հարցերը: Հայաստանում բարձրաստիճան պետական պաշտոնյաների դիրքորոշումը կանանց անվտանգության ոլորտում հիմնականում սահմանափակվում է կանանց՝ զինված ուժերում ծառայությանը մասնակից դարձնելու ձևով: Պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարին հանրային քննարկման էր դրել կամավոր հիմունքներով իգական սեռի ներկայացուցիչների ժամկետային զինծառայություն անցնելուն վերաբերող նախագծերի փաթեթը: Մինչդեռ բանակը որպես ինստիտուցիոնալ կառույց հարմարեցված չէ կանանց կարիքներին, ինչպես նաև անվտանգային տեսանկյունից կանայք կարող են ենթարկվել բռնությունների բանակում. մի ինստիտուտում, որն ի սկզբանե ստեղծվել է տղամարդկանց կողմից: Անվտանգության տեսանկյունից, հետպատերազմական երկրում մեկ այլ մարտահրավեր է պետության ծնելիության քաղաքականությունը միայն դրամական աջակցության ծրագրերով խթանելու մոտեցումը, որը լրացուցիչ ճնշում է կանանց վրա, ովքեր արդեն իսկ ենթարկվում են բռնությունների: Ծնելիության խթանման իրավունքահեն քաղաքականությունը պետք է ներառի միջոցառումների լայն շրջանակ, այդ թվում՝ գենդերային հավասարության, մասնավորապես՝ երեխայի խնամքի հարցերում տղամարդկանց մասնակցությունը խթանող քաղաքականություններ, երեխաների խնամքի բավարար թվով հաստատություններ, նաև դրամական աջակցության ծրագրեր երեխաներ ունեցող ընտանիքներին:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, անվտանգություն, խաղաղություն» N1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-24թթ. Գործողությունների ազգային ծրագիրը

2022թ. հուլիսի 2-ին ՀՀ Կառավարությունը N 803-Լ որոշմամբ՝ հաստատեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2022-2024թթ. ազգային ծրագիրը: Ծրագրի հիմնական ուղղությունների ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել հիմնական գործողությունները որպես՝ «կին զինծառայողների դերի բարձրացում, կանանց կարիքների և առաջխաղացման խոչընդոտների բացահայտում և համապատասխան միջոցառումների կիրառում», «կանանց իրավունքների պաշտպանություն, պատերազմից և բռնությունից հետո վերականգնողական աշխատանքներ՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական աջակցություն», «արտակարգ իրավիճակների արձագանքման պատրաստվածության բարձրացում, եթե կանայք պատրաստված են, ապա կարող ենք ասել, որ երեխաներն ու ընտանիքները ևս պատրաստված են»: Ընդհանուր գործողությունների և պետական կառույցների բաշխվածությունը (հիմնական դերակատարները Պաշտպանության և Արտակարգ իրավիճակների նախարարություններն են) վկայում է, որ փաստաթղթի ընդհանուր տրամաբանությունը կառուցված չէ անվտանգության հայեցակարգի շուրջ, որը կներառի այս հասկացության լայն ընկալումը, այլ պատերազմի հետևանքների հաղթահարումն է և նոր պատերազմին պատրաստվածությունը: Մտահոգիչ է նաև պետական ֆինանսավորման բացակայությունը գործողությունների իրականացման համար:

Առաջարկներ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

- Կանանց բոլոր խմբերի կարիքների արտացոլում ԿԽԱ օրակարգի առաջխաղացման շրջանակներում:
- ԿԽԱ օրակարգի շրջանակներում անվտանգության հայեցակարգի փոփոխություն՝ ռազմականացումից դեպի սոցիալական պաշտպանություն և ակտիվ մասնակցություն:
- 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-24թթ. Գործողությունների ազգային ծրագրի ֆինանսավորում պետության կողմից: Ինչպես նաև գործուն մեխանիզմներ քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկում իրականացնելու համար:
- Կանանց տարբեր խմբերի ներգրավում 1325 բանաձևի դրույթների իրականացման հետագա գործողությունների ազգային ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում:

Հղումներ

««Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը. միջազգային և տեղական փորձի վերլուծություն», ուսումնասիրություն: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, 2022: https://bit.ly/3mqWT8L

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2022-2024թթ. ազգային ծրագիր, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=163530

© «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ (2023) «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգը ՀՀ-ում. փաստաթերթ

womenofarmenia@gmail.com | +374 94 56 56 26 | womenofarmenia.org

Սույն հրապարակությունն իրականացվել է Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն կրում են բացառապես հեղինակները: SIDA-ն կարող է չկիսել դրանում արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները:

Շվեդիա Sverige

ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ WRC ARMENIA